

Զ Ե Կ Ո Ւ Յ Ո Ւ Մ Ն

. . . . Խմբագրութիւն Բազմալէսայ Հանդիսի

Յովսէփ Իզմիրեանց կտակին Գործադիր—Մնայուն Յանձնաժողովն՝ ըստ կամաց բարեյիշատակ հանգուցելոյն կը փութայ խնդրել « Բազմալէսայ » Հանդիսի Խմբագրութենէն՝ որ հաճի արտատպել (ամբողջովին կամ քաղուածօրէն) բարեյիշատակ հանգուցելոյն կողմէ հաստատեալ Սահակ—Մեսրոպեան Գրական Մրցանակաբաշխութեան տեղեկագրութիւնն՝ ըստ հրատարակութեան Արեւելք օրագրոյ, Թիւ 1060, որ ընդ գրոյս կը յուղարկուի, ինչպէս նաեւ ներփակեալ Ազգն մրցանակաբաշխութեան, որ յառաջիկայ տարի պիտի կատարուի, եւ ընդունել իւր շնորհակալութիւնն:

28 Յուլիս, 1887

Պատրիարքարան Հայոց
Իզմիրեանց կտակին Մնայուն Յանձնաժողով

ԱԶԴ

ԳՐՐԾԱԴԻՐ ՄՆԱՅՈՒՆ ՅԱՆԶՆԱԺՈՂՈՎՈՅ

ԿՏԱԿԻՆ ՅՈՎՍԷՓԱՅ ԻԶՄԻՐԵԱՆՑ

Պահակ Մեսրոպեան Գրական Մրցանակաբաշխութիւնն՝ որ բարեյիշատակ Յովսէփ Իզմիրեանցի կողմէ հաստատուած է, պիտի կատարի յառաջիկայ 1888 տարւոյ Սրբոց Թարգմանչաց տօնի օրն: Հետեալէս Գործադիր—Մնայուն Յանձնաժողովն կը փութայ հրաւիրել այն հեղինակներն՝ որ ունին ազգային լեզուաբանութեան (Ֆիլոլոժի) և պատմութեան վերաբերեալ երկասիրութիւններ ձեռագիր կամ տպագիր, և կը փափաքին մասնակցիլ մրցանակաբաշխութեան, փութան յուղարկել զայնս առ Ամեն Սրբազան Պատրիարք Հայրն 'ի կոստանդնուպոլիս, մինչև յառաջիկայ յունվարի սկիզբն:

Տպադիր երկասիրութիւնք հարկ է որ երեք օրինակ յուղարկուին:

28 Յուլիս, 1887

Պատրիարքարան Հայոց
Իզմիրեան կտակին Մնայուն Յանձնաժողով